



Համարը N 1295-Ն	Տեսակը	Հիմնական
Տիպը Որոշում	Կարգավիճակը	Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2012.12.28/66(940).1	Ընդունման վայրը	Երևան
Հոդ.1422.11		
Ընդունող մարմինը ՀՀ վարչապետ	Ընդունման ամսաթիվը	28.12.2012
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ	Ստորագրման ամսաթիվը	28.12.2012
Վավերացնող մարմինը	Վավերացման ամսաթիվը	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 07.01.2013	Ուժը կորցնելու ամսաթիվը	

- Կապեր այլ փաստաթղթերի հետ
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 835-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2012 թվականի N 1295-Ն

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 835-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 1055-Ն որոշման N 2 հավելվածի 60-րդ կետի՝

1. Ստեղծել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով:
2. Հաստատել՝
 - 1) երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի աշխատանքային գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի «Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին» N 835-Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2012 թ. դեկտեմբերի 28
Երևան

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2012 թ.
դեկտեմբերի 28-ի N 1295-Ն
որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ ու այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանն աջակցելը.
- 2) երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման ապահովմանն աջակցելը.
- 3) երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելը.
- 4) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն աջակցելը.
- 5) երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն աջակցելը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար՝

- 1) քննարկում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերը.
- 2) ապահովում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերի իրականացման մոնիթորինգի իրականացումը՝ հանձնաժողովին կից ստեղծելով մոնիթորինգի աշխատանքային խումբ, քննարկում և հաստատում է մոնիթորինգի աշխատանքային խմբի տարեկան աշխատանքային պլանը և հաշվետվությունները, անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում շահագրգիռ մարմիններին.
- 3) քննարկում և առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների գործունեությանն ուղղված քաղաքացիների դիմումների և բողոքների վերաբերյալ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.
- 4) առաջարկություններ է ներկայացնում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ.
- 5) քննարկում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը և ներկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման համար.
- 6) քննարկում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտի հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը և դրանց մասին տալիս եզրակացություն.
- 7) ուսումնասիրում և վերլուծում է երեխայի իրավունքների խախտման պատճառներն ու ներկայացնում առաջարկություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ.
- 8) քննարկում է Հայաստանի Հանրապետության մարզպետների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների տարեկան ծրագրերի հաշվետվությունները և, ըստ անհրաժեշտության, ներկայացնում առաջարկություններ.
- 9) առաջարկություններ է ներկայացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության պետական ծրագրերի իրականացման վերաբերյալ.
- 10) ըստ անհրաժեշտության, կարող է իրականացնել ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական և մասնավոր հաստատությունների, ինչպես նաև երեխայի պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը.
- 11) աջակցում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողների վերապատրաստման գործընթացին:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 5. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:
- 6. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից:
- 7. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է իր կողմից յուրաքանչյուր

տարի հաստատվող աշխատանքային ծրագրի հիման վրա:

8. Հանձնաժողովն իր գործառնություններն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել աշխատանքային խմբեր:

- 9. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:
- 10. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքներով:
- 11. Հանձնաժողովի որոշումներն ունեն երաշխավորական բնույթ:
- 12. Հանձնաժողովի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ:

Անհրաժեշտության դեպքում արտահերթ նիստեր կարող են գումարվել հանձնաժողովի նախագահի կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

13. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

14. Հանձնաժողովը պետական կառավարման մարմիններից կարող է ստանալ երեխաների պաշտպանության հարցերին առնչվող նյութեր, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Հանձնաժողովի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստը կայանալու օրվանից մեկ շաբաթ առաջ: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն:

15. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների գրավոր կարծիքները (դրանց առկայության դեպքում) կցվում են արձանագրությանը: Հավասար ձայների առկայության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

16. Հանձնաժողովի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

17. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.
- 2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.
- 3) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք.
- 4) ստորագրում է հանձնաժողովի ընդունած որոշումները և արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված գրագրությունները.

5) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում:

18. Հանձնաժողովի անդամը՝

- 1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.
- 2) հարցեր է ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը.
- 3) առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) ծանոթանում է հանձնաժողովի կողմից տրվող առաջարկությունների, եզրակացությունների նախագծերին, հանձնաժողովի նիստերի արձանագրություններին, հանձնաժողովի որոշումներին և դրանց քվեարկության արդյունքներին, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում գրավոր կարծիք.

5) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.

6) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վարում է հանձնաժողովի նիստը, ստորագրում է իր կողմից նախագահած նիստի արձանագրությունը.

7) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

19. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների արդյունավետ և կանոնավոր իրականացումը.

2) հանձնաժողովի անդամներին է իրազեկում հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, տեղի և օրակարգի մասին.

3) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգը և այն ներկայացնում հանձնաժողովի նախագահի հաստատմանը.

4) նախապատրաստում է հանձնաժողովի նիստին քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը, սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի նախագահին և անդամներին.

5) արձանագրում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է արձանագրությունները և ներկայացնում հանձնաժողովի նախագահի ստորագրությանը.

6) կազմում է հանձնաժողովի որոշումների նախագծերը և դրանք ներկայացնում հանձնաժողովի նախագահի հաստատմանը.

7) հանձնաժողովի անդամների պահանջով վերջիններիս է տրամադրում հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, ինչպես նաև հանձնաժողովի որոշումները՝ նիստին նրանց մասնակցելու հանգամանքից.

8) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հրավիրում է հանձնաժողովի նիստերին այլ անձանց, իրազեկում հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, տեղի և օրակարգի մասին.

9) կազմում է հանձնաժողովի գործունեության հետ կապված գրագրությունների նախագծերը.

10) կատարում է հանձնաժողովի նախագահի այլ հանձնարարականներ:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Ա. Ասատրյան -ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (հանձնաժողովի նախագահ)
- Հ. Դարբինյան -ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
- Ֆ. Բերիկյան -ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
- Ա. Օրբելյան -ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- Ս. Բարսեղյան -ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
- Ա. Միրզախանյան -ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ
- Ժ. Ասատրյան -ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսության սոցիալական ոլորտի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ
- Ն. Հովհաննիսյան -ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթական վարչության պետ
- Ռ. Ստեփանյան -ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ
- Ն. Դուրյան -ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ-ի 3-րդ վարչության պետի տեղակալ
- Լ. Ղազարյան -ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)
- Մ. Անտոնյան -Երեխաների աջակցության կենտրոնի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
- Ս. Թադևոսյան -«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Մ. Շահվերդյան -«Առավոտ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Հովհաննիսյան -«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ (համաձայնությամբ)
- Ս. Խաչատրյան -Հայաստանի մանուկների հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
- Ա. Քոչարյան -«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն (համաձայնությամբ)
- Ա. Մնացականյան -Հայ օգնության միության ծրագրերի պատասխանատու (համաձայնությամբ)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան